ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ *

Հրանտ Հայրապետյան

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, մարզ, իրավիճակ, խնդիր, ուսումնասիրություն, զարգացում, արդյունավետության բարձրացում:

Գյուղատնտեսության բնագավառում արդյունավետ տնտեսական քաղաքականություն վարելու և գյուղացիական տնտեսությունների արտադրությունն արդյունավետ կազմակերպելու, գյուղական բնակչության զբաղվածությունն ապահովելու, արտադրանքն իրացնելու, գյուղական համայնքներում բնակչության կենսամակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը մարզերի գյուղատնտեսությունը զարգացնելն է: Մարզերում գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով: Այս առանձնահատկությունը մի կողմից՝ արտահայտվում է բերքատվության մակարդակի, իսկ մյուս կողմից՝ տարբեր տարածաշրջաններում բերքի ստացման ժամկետների տարբերություններով:

Գյուղատնտեսության կայուն զարգացումը, պարենային անվտանգության և ապահովվածության մակարդակը, գյուղական բնակչության եկամուտները կախված են մարզերի գյուղատնտեսությունում տիրող իրավիճակներից: Դրա համար նախ և առաջ պետք է իրականացնել համակարգված ուսումնասիրություն մարզերում տիրող իրավիճակի, յուրաքանչյուր մարզի գյուղատնտեսական առանձնահատկությունների, սպառնացող վտանգների, տարվող գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ, ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարել համապատասխան միջոցառումներ մարզերի գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման ուղղությամբ, որը կհանգեցի հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը:

Հայաստանի ագրոէկոլոգիական պայմանները, աշխարհագրական դիրքը և բանջարեղենի բազմաբնույթ օգտագործումը հանգեցրել են բանջարեղենի տեսականու բազմազանության: Հայաստանում աճեցվում են բանջարեղենի հետևյալ տեսակները. լոլիկ, վարունգ, կաղամբ, սոխ, սմբուկ, բողկ, գազար, սխտոր, թարխուն, ծնեբեկ, սպանախ, պղպեղ, լոբի, ծաղկակաղամբ, շաղգամ, բանջարանոցային բողկ, մաղադանոս, համեմ, ռեհան և այլն: Հայաստանը հարուստ է նաև պտուղներով և հատապտուղներով, ինչպես նաև աճեցվում է հացահատիկ [1]: Հանրապետության առանձնահատկությունները հուսալի նախադրյալներ են ստեղծում համայնքներում առկա ներուժի արդյունավետ օգտագործման և, այդպիսով, գյուղատնտեսության զարգացման համար: Դրա համար, հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ագրարային հատվածում առկա իրավիճակը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունները, առաջացած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, կարևորվում է պետական ակտիվ աջակցությունը գյուղին և գյուղատնտեսությանը: Այն առավելապես պետք է ուղղված լինի ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, մարզերի գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության և գյուղի ենթակառուցվածքների զար-

* Հոդվածն ընդունվել է 27.09.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ., Ա. Քթոյանը:
18. 10. 19:

գացմանը, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանմանը, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի զարգացմանը և այլն: Այդ նպատակով ուսումնասիրենք յուրաքանչյուր մարզում տիրող իրավիճակը, գյուղատնտեսական առանձնահատկությունները, բուսաբուծության զարգացման հնարավորությունները, հեռանկարներն ու խոչընդոտները:

Արարատի մարզ: Արարատի մարզում տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության և բանջարաբուծության մեջ, որոնցից ամենատարածվածը խաղողագործությունն է: Տարածքի միայն մոտ 30%-ն է հարթավայրային: Հիմնական պտղատու այգիներն են խաղողի, դեղձի, ծիրանի այգիները, ինչպես նաև մշակվում են խնձոր, տանձ, կեռաս, սալոր և այլն: Մարզի հիմնական մշակաբույսերն են լոլիկը, սիսեռը, լոբին, վարունգը, պղպեղը, կանաչ սմբուկը, ձմերուկը, սեխը, ցորենը: Մարզում կան մի շարք արտադրական կազմակերպություններ, որոնք զբաղվում են մարզում արտադրված գյուղմթերքի վերամշակմամբ՝ մուրաբաների, բնական հյութերի, պահածոների, տոմատի մածուկների արտադրությամբ: Խաղողագործության ճյուղի զարգացումը խոչընդոտում են՝ խաղողի ներկայիս սորտային կազմի ոչ ամբողջական համապատասխանությունը վերամշակող արդյունաբերության պահանջներին, մշակության ագրոտեխնիկայի ոչ լիարժեք կատարումը և այգիների բարձր նոսրությունը [2]: Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ մարզերում աճեցվող պտղի և հատապտղի քանակը, համաձայն որի՝ պտղի և հատապտղի ցուցանիշներով առաջատարը Արարատի մարզն է: Արարատի մարզին հաջորդում են Արմավիրը և Արագածոտնի մարզերը: 2018թ-ին ամենացածր ցուցանիշը գրանցվել է Վայոց ձորում:



Գծապատկեր 1. Պտղի և հատապտղի համախառն ցուցանիշները ՀՀ մարզերում և Երևանում 2016-2018թթ., (ցենտներ) [3]

Արարատի մարզում հիմնական հանդիպող կլիմայական ռիսկերն են՝ հեղեղումները, ցրտահարությունը (45-50%), որոնք հաճախ հանդիպում են Արարատյան դաշտում և նրա նախալեռներում, միջինը՝ տարեկան 3 անգամ, մառախուղ, կարկուտ, ինչպես նաև երաշտը 92-94%, նախալեռներում 52-57%, արձանագրվում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին՝ 2-4 տարին 1 անգամ, սակայն կարող է լինել նաև գարնանը և աշնանը: Այս շրջանի ցրտադիմացկուն բուսատեսակներից են համարվում աշորան, ցորենը, տրիտիկալեն, գարին, վարսակը, կարծր ցորենը [4]:

Գեղարքունիքի մարզ: Գեղարքունիքի մարզի կլիման բնորոշվում է երկարատև և խստաշունչ ձմեռներով, քանի որ գտնվում է ընդհանուր առմամբ ծովի մակերևույթից 2000-3500 մ բարձրության վրա: ՀՀ Գեղարքունիքի մարզը ամբողջությամբ գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, որին բնորոշ է զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ ամառ: Գյուղատնտեսությանը մեծ վնասներ հասցնող կլիմայական ռիսկերից են՝ երաշտը, ձնահյուսը, կարկուտը, ձնաբուքը, քամին, մառախուղը: Կարկուտները հատկապես գարնանն են լինում, տարեկան 4-5 անգամ: 42.000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում տարեկան արտադրվում է 230.000 տոննա կարտոֆիլ, 250.000 տոննա անասնակեր, 35.000 տոննա կաղամբ, 60.000 տոննա հացահատիկ, 7.000 տոննա պտուղ: Գեղարքունիքի մարզում մշակվող հիմնական մշակաբույսերն են՝ հացահատիկային մշակաբույսեր (44 102 հա, որը կազմում է մարզի ընդհանուր ցանքատարածությունների 62.3%), կարտոֆիլ (14 786 հա, 18.4%), բանջարեղեն (2 092 հա, 2.3%): Վերջին տարիներին առաջընթաց է զգացվում նաև հատիկաընդերային մշակաբույսերի մշակությունը Գեղարքունիքի մարզում արմատավորելու գործում (ոլոռ, սիսեռ, ոսպ), որոնք իրենց տնտեսական արդյունավետությամբ 3-4 անգամ գերազանցում են հացահատիկային մշակաբույսերին [5]:

Կոտայքի մարզ: Ինչպես հանրապետության, այնպես էլ Կոտայքի մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և հիմնական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա: Ներկայումս սերմնաբուծական և տնկարանային տնտեսությունների համակարգը անկատար է և կատարելագործման անհրաժեշտություն ունի: Հանրապետության պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսության և առաջին հերթին բուսաբուծության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում վճռորոշ դեր ունի բարձր վերարտադրության սերմերի և որակյալ տնկանյութի արտադրության կազմակերպումը: Նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացմանն ուղղված ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ միջոցառումների իրականացում, ինչը հնարավորություն կընձեռի խթանելու սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումը և պայմաններ ստեղծելու մարզում բարձրորակ սերմերի արտադրության ու օգտագործման համար: Վերջին տարիներին փաստացի ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր հնդավոր պտղատեսակների արտադրության համար: Առաջիկա ծրագրային միջոցառումներն իրականացնելիս պետք է հաշվի առնել նշված նախընտրելի մասնագիտացումը:

Սյունիքի մարզ: Հացահատիկային մշակաբույսերի ցանքային տարածությունների ցուցանիշով Սյունիքի մարզը ՀՀ-ում զբաղեցնում է 4-րդ տեղը՝ Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի մարզերից հետո: Վերջին տարիներին մարզում զբաղվում են նաև կարտոֆիլագործությամբ, որի մեծ մասը բաժին է ընկնում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններին: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.5%-ը: Դրանց մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 47.7%, և վարելահողերը՝ 14.2%: Մարզի 44.8 հազ հա վարելահողերից 2012թ. գյուղացիական և

ֆերմերային տնտեսություններն օգտագործել են 33.5 հազ. հա, որից 22.6 հազ. հա՝ հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 7.1 հազ. հա վարելահող, որից 2.8 հազ. հա սեփականաշնորհված է: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում բարձրադիր գոտում են և ունեն մեծ թեքություններ: Ն-շենք, որ հացամթերքով ապահովման հիմնախնդիրը ՀՀ պարենային անվտանգության ամենակարևորագույն հարցն է, որտեղ մեկ շնչի հաշվով հացամթերքի սպառումը 2-3 անգամ գերազանցում է ԱՄՆ-ին, Ճապոնիային, եվրոպական առանձին երկրներին և 25-ով՝ համաշխարհային միջին մակարդակին [6]:

Ինչպես ողջ հանրապետությունում, Սյունիքի մարզում ևս բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության ու տնկարանային տնտեսության զարգացումն է՝ բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա, ինչը նաև ՀՀ պարենային անվտանգության ապահովման վճռորոշ գործոններից է: Մարզում պտղաբուծության զարգացումը մշտապես գտնվել է ուշադրության կենտրոնում, նույնիսկ խաղաղագործության զարգացման հնարավորություններ կան Գորիսի և Մեղրիի տարածաշրջաններում: Պետք է նկատի ունենալ, որ տարածաշրջանի հողատեսքերը քարքարոտ և ծանր հողեր են, հետևաբար պետք է մեծ լինի թրթուրավոր տրակտորների թիվը: Մարզում կա շուրջ 950 թրթուրավոր տրակտոր, սակայն դրանց նորացման աստիճանը բավականին ցածր է, և շահագործման դեպքում ծախսերը բավականին բարձր են:

Լոռու մարզ: Մարզում յուրաքանչյուր տարի ցանվում են հացահատիկ, կարտոֆիլ, բանջարեղեն, բազմամյա և միամյա կերային մշակաբույսեր, որոնց միջին բերքատվությունը հաճախ զիջում է հանրապետության միջին ցուցանիշներին: Պատճառները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների բացակայությունը, սերմերի ցածր որակը, գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը: Կարտոֆիլի արտադրության ծավալներով մարզը հանրապետությունում զբաղեցնում է 3-րդ տեղը՝ Գեղարքունիքի և Շիրակի մարզերից հետո: Յուրաքանչյուր տարի մարզում ցանվում է մեծ քանակությամբ կարտոֆիլ, սակայն տարեցտարի այդ ցուցանիշը նվազում է: Ցանքերի կրճատման պատճառը կարտոֆիլի իրացման շուկայի բացակայությունն է և ներկրվող բարձրորակ տնկանյութի բարձր գինը: Արտադրված կարտոֆիլի իրացման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել վերամշակման արտադրամասեր և սառնարանային տնտեսություններ:

Արագածոտնի մարզ: ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են մարզի ընդհանուր տարածքի 79.2 %-ը [7]: Մարզի բնակլիմայական պայմանները, ըստ տարածաշրջանների, բազմազան են: Կան նախալեռնային, լեռնային և բարձրլեռնային գոտիներ: Դրանցով էլ պայմանավորված է գյուղատնտեսության կողմնորոշումը տարբեր տարածաշրջաններում: Ցածրադիր գոտում՝ Աշտարակի տարածաշրջանում և Թալինի նախալեռնային գոտիներում մշակվում են ջերմասեր մշակաբույսեր՝ խաղող, հնդավոր պտուղներ: Այստեղ տարվա ընթացքում խոտհարքերից ստացվում է 2-3 բերք, հացահատիկի տարածություններն օգտագործվում են երկու անգամ: Այս տարածքներում համեմատաբար զարգացած են ենթակառույցները, որը բարձրացնում է ճյուղի արդյունավետությունը: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (63.2 %) և վարելահողերը (24.8 %): Ինչպես արդեն նշվել էր, մարզի գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության՝ մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն ուղղությամբ և իր ցուցանիշներով զբաղեցնում է 3-րդ տեղը՝ Գեղարքունիքի և Շիրակի մարզերից հետո: Կարտոֆիլի ցանքատարածությունները մարզում 1622 հա են: Միջին բերքատվությունը՝ 259 g: Բանջարանոցային մշակաբույսերը մշակում են համեմատա-

բար քիչ տարածությունների վրա և մյուս մարզերի համեմատությամբ ապահովում են ցածր բերքատվություն:

Վայոց ձորի մարզ: Վայոց ձորի մարզի բնակչության զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական տնտեսությունների և այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով: Նախկինում և այժմ բուսաբուծության առաջատար ճյուղեր են պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և հացահատիկի արտադրությունը: Մարզում բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները այդքան էլ մեծ չեն, որովհետև հիմնականում մշակվում են անջրդի վարելահողերը, որտեղ չի կիրառվում ցանքաշրջանառություն ու լիարժեք պարարտացում, ցածր է հողի բնական բերրիությունը, որի հետևանքով բերքատվությունը լինում է ցածր և տնտեսապես ոչ շահավետ: Մարզում հաճախակի հանդիպող գյուղատնտեսական վտանգներն են՝ սելավները, ջրհեղեղները, երաշտը, ցրտահարությունը: Մարզում, սակայն, մյուս մարզերի համեմատությամբ, վտանգավոր երևույթներն ավելի սակավադեպ են: Տրվում է մարզերում տեղի ունեցող վտանգավոր երևույթների գծապատկերը (2):



Գծապատկեր 2. Տարերային աղետների և վտանգավոր երևույթների թիվը ՀՀ մարզերում և Երևանում, 2018թ.[8]

Համաձայն գծապատկերի՝ 2016-2018թթ. ընթացքում Արարատի մարզը ամենացածր հորիզոնականում է տարերային աղետների և վտանգավոր երևույթների թվով, իսկ ամենից շատ դրանք գրանցվել են են Վայոց ձորում: Թվական աճով հաջորդում են Լոռու և Սյունիքի մարզերը, որտեղ տարերային աղետները 2016-2018 թթ. ընթացքում ավելացել են՝ 24-26:

Տավուշի մարզ: Մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են այգեգործության, ծխախոտագործության, կերարտադրության զարգացման համար: Գյուղատնտեսության ոլորտում գերակա էր անասնապահության ճյուղը: Մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են այգեգործության, հատկապես կորիզավոր, հնդավոր, մերձարևադարձային պտղատեսակների, հատապտուղների և խաղողի արտադրության զարգացման համար: Զարգացման հեռանկար ունեն նաև մեղվաբուծությունը, ծխախոտագործությունը և կերարտադրությունը:Մարզում արտադրվող հիմնական մշակաբույսերն են. կարտոֆիլ, խաղող, ցորեն, գարի, հաճար, եգիպտացորեն, ոլոռ, լոբի, բանջարեղեն, պտուղ, հատապտուղ:

Շիրակի մարզ: Մարզում կան գյուղացիական տնտեսություններ, որոնց միջոցով էլ կազմակերպվում է գյուղատնտեսական արտադրությունը: Դրանցից 350-ը ֆերմերային տնտեսություններ են, որոնցից 61-ը զբաղվում է անասնապահությամբ, 150-ը՝ դաշտավարությամբ, 200-ը՝ մեղվաբուծությամբ, 50-ը՝ գյուղմթերքի վերամշակմամբ (կաթ,

միս, հացահատիկ), 39-ը՝ սերմնարտադրությամբ: Մարզի մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը բաժին է ընկնում 7.4 հա հողատեսք, որից վարելահող՝ 2.7 հա, խոտհարք՝ 0.36 հա, արոտ՝ 3.94 հա [9]: Մարզում բավականին լուրջ հիմնախնդիր է գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, որը հողերի չօգտագործման հիմնական պատճառներից մեկն է: Մարզը մյուս մարզերի համեմատությամբ առաջատար է հացահատիկի և հատիկաընդեղենի բերքի քանակով, որը ներկայացված է ներքոնշյալ գծապատկերում:



Գծապատկեր 3. Հացահատիկի և հատիկաընդեղենի բերքի քանակը մարզերում և Երևանում (ցենտներ), 2016-2018թթ. [9]

Համաձայն գծապատկերի՝ Շիրակի մարզը 2016-2018 թթ. ընթացքում գրանցել է ամենաբարձր ցուցանիշները հացահատիկի բերքի քանակով, 2016թ-ին գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը՝ 1 574 629 ցենտներ: Իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է կրկին Վայոց ձորում:

Մարզում հաճախակի տեղի են ունենում բնական աղետներ, վաղ գարնանային հեղեղումներ, ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն, հետևաբար ապահովագրական համակարգի ձևավորումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Մարզում համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսավարողների շահերը:

Արմավիրի մարզ: ՀՀ Արմավիրի մարզում բնակչության զբաղվածության մեծ մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Արմավիրի մարզում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է 50634 գյուղացիական տնտեսությունների միջոցով: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մարզի վարչական տարածքի 78.1%-ը: Արմավիրի մարզը աչքի է ընկնում բարձր զարգացած գյուղատնտեսությամբ և վերամշակող արդյունաբերությամբ: Մարզի բնատնտեսական պայմանները նպաս-

տավոր են գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության և անասնաբուծության զարգացման համար: Այս տարածաշրջանում հնարավոր է մշակել պտղատու և խաղողի այգիներ, բանջարեղեն, բոստանային մշակաբույսեր, ինչպես նաև տավարաբուծական, ոչխարաբուծական, թռչնաբուծական մի շարք արտադրանքներ: Ներկայումս մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 7000 հեկտարը, որը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսության արտադրության մեջ վերականգնվում է տնտեսությունների մասնագիտացումը գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտղի և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ: Գծապատկեր 4-ում ներկայացված է բանջարեղենի քանակությունը բոլոր մարզերում, և ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արմավիրի մարզում: Արմավիրը, փաստորեն, բանջարեղենի ցուցանիշներով գերազանցում է նաև Արարատի մարզին, որը հաջորդում է Արմավիրին: Նշյալ ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշը եղել է 2017 թ-ին ՝ 4 480 275 ցենտներ:



Գծապատկեր 4. Հացահատիկի և հատիկաընդեղենի բերքի քանակը մարզերում և Երևանում (ցենտներ), 2016-2018թթ. [10]

Արմավիրի մարզը հանրապետությունում բարձր բերքատվություն ապահովող մարզերից է: Հացահատիկի միջին բերքատվությունը վերջին տարիներին տատանվել է 35-45g միջև, խաղող՝ մինչև 200g, պտուղ՝ 100-120g, կարտոֆիլ՝ 300-310g: Մարզի ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է բարձրարժեք մշակաբույսերի մշակության գծով աշխատանքներ իրականացնել [11]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով մարզերի գյուղատնտեսություններում տիրող իրավիճակը, յուրաքանչյուր մարզի գյուղատնտեսական արտադրության առավելությունները, մարզերում առավել հաճախ և հազվադեպ հանդիպող տարերային աղետները և վտանգավոր երևույթները՝ կարելի է նշել, որ ագրարային ոլորտը ժողովրդական տնտեսության ամենառիսկայիններից է: Այստեղ երկարաժամկետ կապիտալ ներդրումները կամ առհասարակ չփոխհատուցվել: Դա կարող է հանգեցնել ֆինանսատնտեսական սպառնալից հետևանքների [12]: Հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները, գյուղատնտեսությունում տեղծված իրավիճակը, ծառացած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը՝ կարևորվում են գյուղատնտեսության պետական ակտիվ աջակցությունն ու պետական կարգավորման մոտեցումների կիրառումը: Այն առավելապես ուղղված պետք է լինի ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ապահովմանը, ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսության ենթակառուցվածքների զարգացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների մատչելիության բարձրացմանը, ոլորտում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների ներմուծման և ներքին շուկայում իրացման հարկային արտոնությունների սահմանմանը, օգտագործվող ռեսուրսների համար սուբսիդավորմանը և սակագնային կարգավորմանը, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, մասնագիտական խորհրդատվության և սննդամթերքի անվտանգության համակարգերի զարգացմանը:

Ընդհանրապես գյուղատնտեսությունը ֆինանսական ներդրումների տեսանկյունից համարվում է բարձր ռիսկային ոլորտ, ինչը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններից դրա անմիջական կախվածությամբ: ՀՀ գյուղատնտեսության ոլորտն առավել ևս աչքի է ընկնում ֆինանսական ներդրումների սակավությամբ, քանի որ առկա է նաև ցածր եկամտաբերության գործոնը: Գաղտնիք չէ, որ ոլորտի ռիսկայնությունից ելնելով՝ վարկերը տրամադրվում են բարձր տոկոսադրույքներով: Այդ նպատակներն իրագործելու համար սահմանվել են հետևյալ ենթանպատակները. ավելացնել գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը և բարձրացնել արտադրության արդյունավետությունը, արդյունավետ օգտագործել գյուղատնտեսության առկա արտադրական ներուժը՝ հողային, ջրային, աշխատանքային, գիտատեխնիկական ռեսուրսները, հաղթահարել գյուղական աղքա-տությունը, կրճատել գյուղական բնակչության արտահոսքը՝ ապահովելով ոչ գյուղատնտեսական զբաղվածության բավարար մակարդակ, բարելավել գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը, մեծացնել շահութաբեր արտադրանքի բաժինը, խորացնել միջազգային տնտեսական կապերը:

Չնայած այն հանգամանքին, որ շուկայական տնտեսության պայմաններում պետական միջամտությունը սահմանափակ է, այնուամենայնիվ վերոհիշյալ նպատակներին հասնելու համար պետությունը պետք է իրականացնի մի շարք գործառույթներ, որոնցից կարևորներն են՝ աջակցությունը արտադրության խոշոր ինժեներական և սոցիալական ենթակառուցվածքների և օրենսդրական հիմքերի ստեղծմանը, ազատ մրցակցության ապահովմանը, գյուղատնտեսական հողերի մոնիտորինգի իրականացումը և պահպանությունը, բույսերի համաճարակային և կարանտին հիվանդությունների կանխարգելումը, գիտատեխնիկական ապահովումը, աջակցությունը տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններին, զարգացման ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը, շուկայական հարաբերությունների խորացումը և այլն:

Պետության գյուղատնտեսական քաղաքականությունն մեջ ներառել ռազմավարական խնդիրները, որոնք կհանգեն հետևյալին. ընդլայնել ագրարային բարեփոխումները, զարգացնել շուկայական ենթակառուցվածքները և կատարելագործել տնտեսավարման ձևերն ու մեխանիզմները, ներդնել առաջադիմական ագրոտեխնիկական համակարգ, բարձրացնել սերմնաբուծության, սելեկցիայի, բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների արդյունավետությունը, զարգացնել տոհմային գործը և բարելավել անասնաբուծության համակարգը, զարգացնել գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրությունները և գյուղի սոցիալական ենթակառուցվածքները, բարձրացնել գյուղատնտեսության գոտիական մասնագիտացման աստիճանը և արդյունավետ տեղաբաշխել արտադրությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Երևան, 2010, էջ 54:
2. Ֆահրադյան Ն. Ագրարային արմատական վերակառուցումները Հայաստանում, Երևան, 2003, էջ 55: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016-2018թթ. հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_12_16a_122.pdf էջ 21, https://www.armstat.am/file/article/sv_12_17a_122.pdf, էջ 21, https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf էջ 23:
3. Հայաստանի Հանրապետության կլիմա, էջ 6 http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/%D5%80%D4%B1%D5%85%D4%B1%D5%8D%D5%D4%B1%D5%86-%D4%BF%D4%BC%D4%BB%D5%84%D4%B1%D5%86-Climate-of-RA.pdf
4. Հայաստանի Հանրապետության մարզերի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածությունները և արտադրատնտեսական ցուցանիշների վերլուծությունը, էջ 3-4, http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/ՀՀ-ՄԱՐԶԵՐԻ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ-ԵՎ-ԱՐՏԱԴՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ-ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.pdf
5. Աշոտ Բայադյան, ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Երևան, 2013, էջ 29:
6. Հայաստանի Հանրապետության մարզերի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածությունները և արտադրատնտեսական ցուցանիշների վերլուծությունը, էջ 16: http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/ՀՀ-ՄԱՐԶԵՐԻ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ-ԵՎ-ԱՐՏԱԴՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ-ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.pdf
7. Հայաստանի Հանրապետության տարածքում 2018 թվականին գրանցված տեխնածին, տարերային, սոցիալ-կենսաբանական բնույթի արտակարգ դեպքերի վերլուծություն, Երևան, 2019, էջ 209: http://www.mes.am/files/docs/3054.pdf
8. Հայաստանի Հանրապետության մարզերի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածությունները և արտադրատնտեսական ցուցանիշների վերլուծությունը, http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/ՀՀ-ՄԱՐԶԵՐԻ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ-

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ-ԵՎ-ԱՐՏԱԴՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ-ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.pdf էջ 24:

9. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016-2018թթ. հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_12_16a_122.pdf էջ 21, https://www.armstat.am/file/article/sv_12_17a_122.pdf, էջ 21, https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf, էջ 23:
10. Հայաստանի Հանրապետության մարզերի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածությունները և արտադրատնտեսական ցուցանիշների վերլուծությունը, http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/ՀՀ-ՄԱՐԶԵՐԻ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ-ԵՎ-ԱՐՏԱԴՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ-ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.pdf, էջ 42:
11. Գրիգորյան Կ. Ա. և ուրիշներ, Ագրարային տնտեսագիտություն, Երևան, 2013, էջ 9:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գյուղատնտեսության ներկա իրավիճակը և հիմնախնդիրները ՀՀ մարզերում

Հրանտ Հայրապետյան

Գյուղատնտեսության բնագավառում արդյունավետ տնտեսական քաղաքականություն վարելու և գյուղացիական տնտեսությունների արտադրությունն արդյունավետ կազմակերպելու, գյուղական բնակչության զբաղվածությունն ապահովելու, արտադրանքն իրացնելու, գյուղական համայնքներում բնակչության կենսամակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը մարզերի գյուղատնտեսությունը զարգացնելն է: Մարզերում գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով: Դրա համար նախ և առաջ պետք է իրականացնել համակարգված ուսում¬նասիրություն մարզերում տիրող իրավիճակի, յուրաքանչյուր մարզի գյուղատնտեսական առանձնա¬հատկությունների, սպառնացող վտանգների, տարվող գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ: Ամփոփ կերպով ներկայացված են Հայաստանի մարզերում գյուղատնտեսության առանձնահատկությունները:

РЕЗЮМЕ

Современное состояние и проблемы сельскохозяйственного значения в регионах РА

Грант Айрапетян

Ключевые слова: сельское хозяйство, область, ситуация, проблема, исследование, развитие, повышение эффективности.

С целью введения грамотной экономической стратегии с сфере сельского хозяйства, эффективной организации процессов производства и сбыта продукции, повышения социального уровня, а также обеспечения занятости сельского населения необходимо обеспечить развитие сельского хозяйства отдельных регионов республики. Основным фактором эффективности производства в регионах являются климатические условия. Для обеспечения роста эффективности необходимо провести системный анализ состояния региона, выявить особенности каждого региона, а также определить осуществляемые работы и возможные угрожающие факторы. В статье представлены особенности сельского хозяйства регионов РА.

SUMMARY

Current Situation and Problems of Agriculture in the Regions of RA

Hrant Hayrapetyan

Keywords: agriculture, region, situation, problem, research, development, efficiency improvement.

One of the prerequisites for effective economic policy in agriculture and efficient organization of the production of peasant holdings, provision with the employment of rural population, realization of production, improvement of living standards of the population in rural communities is the development of the agriculture in provinces. The efficiency of agricultural production in the province is mainly due to climatic conditions. For this purpose, first of all, a systematic study should be carried out on the situation in the provinces, the agricultural features of each province, the dangers posed and the agricultural work being carried out. The peculiarities of agriculture in the provinces of Armenia are summarized in this article.